

Ի. Layard Թրքահայաստանի իր այցելութեան առթիւ կը վկայէ որ Պիթլիսի (Բաղէշ) հրապարակին «արտածման առեւտուրը գլխաւորաբար կը հայթայթուի լեռներու արտադրութիւններէն, գետոր, մեղր, մոմ, բուրդ եւ գորգ, ու հիւսուածեղէններ, ներկուած եւ հիւսուած վրաններու տակ: . . . գորգերը հարուստ եւ կազուղ հիւսուածքով են, գծածեւերը ցոյց կու տան նկատելի գերազանցութիւն եւ ճաշակ, որոնք շատ յարգի են Թուրքիոյ մէջ»⁽⁴³⁾:

Գարձեալ Բաղէշի գորգերուն համար 1865ին, ուրիշ Անգլիացի ուղեգիր մը՝ John Usshur Պիթլիսի շուկան նկարագրած առեն կը վրկայէ որ հոն կար «գորգերու նկատելի ցուցադրութիւն, Թուրքիոյ կոչուած (գորգերուն) սմանց լաւագոյնը եւ սլաճառագոյնը շինուած են այս շրջանի քիւրտ կիներէն»⁽⁴⁴⁾: Ուղեգիրը, որ հարեւանցի գիտող մըն է, կը սխալի միայն քիւրտ կիներուն վերագրելով հոս շինուած գորգերը, որոնց արտադրութեանց մէջ մեծ բաժին ունէին նաեւ հայերը:

Լալեարտ 1847ին Ախլաթի աննախանձելի վիճակով վանքերէն մին այցելելով կ'ըսէ. վանապանները շատ խեղճ կ'ապրէին, «իրենց անկողինը՝ մինչեւ առէջները մաշած գորգ մըն է, սիւսուած փտած տախտակներու վրայ», եւ կը շեշտէ որ վանքը այս վիճակին մատնուած էր Քիւրտ Մէհմէտ Պէկի կողմէ կողպառուելէ վերջ: Ուրիշ Եւրոպացի դրող մը, Major Frederick Millingen իր ուղեգրութեան մէջ, կատարուած 1868ին, կը գրէ որ Վանի մէջ կ'արտադրեն «գորգեր լաւ գծածեւերով եւ ճոխ գոյներով, բայց այնքան նեղ եւ երկար՝ որոնք կարելի չէ (Եւրոպական) յարկարածիներու կահաւորման գործածել»⁽⁴⁵⁾:

Շարունակելով նմանօրինակ վկայութիւնները՝ կը գտնենք որ 1879ին, ըստ Գարեգին Եպ. Սրուանձտեանցի, Սեբաստիոյ մէջ «աղէկ կարպետ (քիլիմ) եւ քիւրտի գորգ (խալի) կը գործեն»⁽⁴⁶⁾: Ուրիշ մըն ալ մեր աշխարհագիրներէն կը շեշտէ որ Սեբաստիոյ Հայ կանանց շինած գորգերը ու կապերտները ընտիր եւ գեղեցիկ են⁽⁴⁷⁾: Օտար մը, Vital Guinet կ'աւելցնէ թէ Սեբաստացի քրիստոնեաները (իմա Հայերը) ԺԹ դարուն վերջերը մեծ յաջողութեամբ սարսկական գորգեր կ'ընդօրինակէին⁽⁴⁸⁾:

Թրքահայաստանի ուրիշ մասերն ալ զուրկ չէին տեղական գորգի կամ կապերտի արտադրութենէ: Կուտինայի (Քէօթաշիա) մասին կը վկայուի, որ գորգի յատուկ վեց գործարաններ հաստատուած էին

(43) Nineveh and Babylon, New York, 1853, p. 36.

(44) London to Persepolis. — London, 1865, p. 344.

(45) Wild Life Among the Koords, London, p. 154: Նոյն հեղինակը յաճախ կու դայ հաստատել եւ կրկնել այս տողերը:

(46) Թորոս Աղբար: — Կ. Պոլիս, 1879, Ա. մաս, էջ 168:

(47) Աշխարհ. Հայաստանի: — Աւետիք Տէր Յակոբեան: — Թիֆլիս, 1914, էջ 221:

(48) La Turquie d'Asie Géographie Administrative, 1892, Paris, p. 200.